զհուճէթն, զպօստանճիպաշուն քով գնալն, զխառնակութիւնն Յակոբին և զայլսն ամենայն, առ կաթողիկոսն ուղարկեցին։

Այս ամենայն փոքր ի չատէ եւ սակաւ ի բազմաց ի սկիզբն տարուն մինչև ի լրումն տարուս ծրեցի. եւ թէ պակաս եւ կամ յաւել կամ սղալ եւ անյարմար[1]) ինչ գտանիցէք ի սմա, թողութիւն չնորհեցէք սակս անվարժութեան եւ տհասութեան մտաց իմոց, զի կար մեր այս էր, եւ ի մէջ աշխարհի զբաղմանց գոլով այսչափս կարացի հանել ի յանկ, այս եւս աղօթիւք և աւրհնութեամբ սուրբ հարց մեր և ողորմութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւ այլն Միոյն է գիտելի, որ միով հրամանաւ գոյացոյց զէակս ամենայն, նմա փառք յաւիտեանս, ամէն։

Թվին ՌՃ եւ ե–ն Հայոց(*) չնորհօքն Քրիստոսի սկսայ զայս ինչ սակաւ իրս, որ եւ ողորմութիւնն Քրիստոսի օգնեսցէ հասուցանել ի ծար բանիս։

Զատիկ եւ Յարութիւնն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Ապրիլ ամսոյ ԻԶ–ն. ի Սուրբ Նիկողոս գնացի, քանզի եղիազար վարդապետն ի տեղն էր և բազում և անթիւ ժողովուրդ կայր որ չը կարեմ ծըրել, ի յԱստուածածնայ եկեղեցւոյն եւ ի Սուրբ Սարգըսայ եւս բազում. եկեալ էին ոչ թէ այսօր, այլ եւ յորմէ հետէ եկեալ էր Վարդապետն մեր՝ ի Սուրբ Նիկողոս գալին յամենայն կողմանց լըսել զգան և զքարոզն, որ զարմացուցանէր եւ հիացուցանէր իւր գամագամ մեկնութեամբն և բացայայտութեամբն գրոց սրբոց, զոր փոքր ի չատէ յայտնեալ եմք ի Դ (ՌԾԴ) թվականին անցեալ տարիս։ Ինքն օրս պատարագ չարաւ, քանզի

1) յանարմար.

(*) Լուս. եւ ըստ նորումս չըՋանի ԽԲ։